ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2024 թվականի N 60- Ա

«ԳԵՂԱՆՈՒՇԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5-րդ կետով և հիմք ընդունելով Աննա Պետրոսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2024 թվականի փետրվարի 13-ից լուծել «Գեղանուշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գայանե Գրիգորյանի հետ 2019 թվականի փետրվարի 13-ին կնքված N 3 աշխատանքային պայմանագիրը:

2. 2024 թվականի փետրվարի 13-ից «Գեղանուշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Աննա Պետրոսյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. փետրվարի 12
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290